4· Սահակ Կամսարական շինեաց զ(այ)ս վկայարան սրբոյ Սարգսի (վերջին երկու բառը գրուած «վկայարան» բառի գլխին, տողամիջին։

Տայրոնի, Մանանայ բառերի մէջ ընդգծուածները աղօտ, փակագծի մէջ առնուած տառերը կորուած են, լրացնում ենք։

3· Ս. Հռիփսիմէի տաճարի արևմտեան պատի ճակատին՝ դրսից՝ Կոմիտաս կաթուղիկոսի մեծ արձանագրութիւնը (փոքրը խորանի պատի վերայ ներսից)։ Ամբողջ արձանագրութիւնը փորուած է մի քարի վերայ, 50×200 սմ. մեծութեամբ։ Քարի մակերևութին ժամանակի ընթացքում փոսեր են գոյացել, երբեմն ջնջելով տառերը։ Բայց ընդհանուր առմամբ արձանագրութիւնն անվնաս է և մեզ պարզ դաղափար է տալիս գրերի ձևի մասին, որ խոշոր, բոլորաձև և դեղեցիկ երկաթագիր է։ Թուական չ'ունինք. բայց ժամանակակից և ականատես հեղինակներից յայտնի է մեզ շինութեան, ասել է թէ, և արձանագրութեան ճիշտ տարին։ Սեբէոս և նորա հետ Գիւտ Նշխարաց Հռիփսիմանց (շուտով հրատարակելու է հ. Գալուստ Տ. Մկրտչեան) գրութեան հեղինակը շինութեան ժամանակը դնում են Թոսրով Ապրուէզի 28-րդ տարին, իսկ Եղնակ երէցը 29-րդ տարին նոյն թագաւորի։ Այս տեղեկութիւնների մէջ հակասութիւն չկայ· երկուսն էլ հաւասար են Քրիստոսական 618 թուականին, միայն տարբեր ձևով հաշուած։

Ծանոթ. Սեբէոս Պոլիս 1851 եր. 139. և Ձեռ. Մատ. Ս. Էջմ. № 1753 1912. 175ա.։ Եղնակ երէց. Սամուէլ Անեցի հրատ. Արշակ Տ. Միքէլեանի, Վաղարշապատ, 1893 եր. 266.։ Նոյնը ունինք մենք Զոհրաբի արտագրութեամբ՝ համեմատած Տ. Կարապետ եպիսկոպոսի արտագրութեան հետ, որ կատարել է անձամբ Փարիզում Ազգային մատենադարանի Сод. 51. Ձեռագրից։ Տես և մեր յօդուածը Կոմիտասի արձանագրութիւնների մասին. Արարատ. 1898· Հոկտ։

Արձանագրութեան մեծութիւնն է 50×196 սմ. մեր նկարը 17½×6 սմ.։ Առաջին տողի մէջ «Կոմիտաս» բառում մի երկրորդ տող· «Հռիփսիմէի» բառի մէջ սի և մի վանկերը կապած։

1· Ես Կոմիտաս եկեղեցապան սր
2· բոյ Հռիփսիմէի կոչեցայ յա
3· թոռ սրբոյն Գրէգորի· շինեցի
4· զտաճար սրբոց վկայիցս քի·

4. Անիի Միջնաբերդում, Կամսարականների բազիլիք եկեղեցու հարաւային պատի արձանագրութիւնը 722 թուականից, եթէ արձանագրութեան «ՀԱ» վերջին տառերը թուական ընդունենք։ Պրոֆ. Մառ սկզբում կասկածում էր, բայց յետոյ իւր կասկածը յետ առաւ*։ Մենք ևս հակուած ենք

* Н· Марръ· Раскопки въ Ани· въ 1904 году· Сп. 1906· եր. 19. Новыя археологическія данныя о постройкахъ типа Ереруйской базилики. З. В. О· Т· XIX. Отдѣльный Оттискъ. եր. 14։